- 15) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Միկմետալ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02233484) 2012 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N 13/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամրանների մատակարարում՝ 23310000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 3. «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամին՝
 - 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:
 - 2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:
 - 4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


1	Ծրագրի նպատակը	«Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշխարհային աշխատանքների իրականացում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից
3	Բարեգործը	«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ (ք.Երևան, Գյուլիստանի պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ԳՎՀՀ 027056657)
4	Ծրագրի կատարողը	«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ (ք.Երևան, Գյուլիստանի պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ԳՎՀՀ 027056657)
5	Ծրագրի իրականացման վայրը և թնազավազը	ՀՀ, ք. Երևան, 0028 Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի Հայոց ցեղասպանության բանգարան - ինստիտուտ կիսություն և գիտություն
6	Ծրագրի բյուջեն	413 697 700 /չորս հարյուր տասներեք միլիոն վեց հարյուր իննսուց հազար յոթ հարյուր/ դրամ
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ
8	Ծրագրի իրականացման տևողությունը	06.09.2012թ. - 30.12.2012թ.

21.13/2

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Հեղինակային հսկողություն, նախագծի փորձաքննություն և տեխնիկական վերահսկողություն (տող 1 + տող 2) մինչև 30.12.2012թ.	8 085 000	
		2. Շինարարական և ինժեներական համակարգերի աշխատանքներ (տող 3 + տող 4) մինչև 30.12.2012թ.	272 732 700	
		3. Շինարարական ապրանքների և սարքավորումների ներմուծում մինչև 30.12.2012թ.	84 000 000	
		4. Շինարարական և այլ ապրանքների ձեռք բերում մինչև 30.12.2012թ.	40 000 000	
		5. Կազմակերպչական ծախսեր մինչև 30.12.2012թ.	8 880 000	
		ԸՆԴԱՄԵՆԸ	413 697 700	
10	Չեղք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԳՈՒՄԱՐ /ԳՅ դրամ/	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
		1. Հեղինակային հսկողություն, նախագծի փորձաքննություն	4 205 000	«Հայնախագիծ» ԲԲԸ «Լավո» ՍՊԸ
		2. Տեխնիկական վերահսկողություն	3 880 000	«ՄԻՇԸ-ք.երևան» ՍՊԸ
		3. Շինարարական աշխատանքներ, այդ թվում՝	229 586 700	
		3.1 հողային աշխատանքներ (քանդում և պայթեցում)	70 027 700	«Արթին Էնթերայս» ՍՊԸ
		3.2 համաշինարարական աշխատանքներ	135 000 000	«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ
		3.3 մետաղական դռներ և շերտավարագույրներ	5 130 700	«Մետաղ - դիզայն» ՍՊԸ
		3.4 տանիքի գոլորշա-և ջրամեկուսացման աշխատանքներ	12 205 000	«Գիգա» ՍՊԸ
		3.5 գազամատակարարման աշխատանքներ	7 223 300	
		4. Ինժեներական համակարգերի աշխատանքներ, այդ թվում՝	43 146 600	
		4.1 կաբսայատան աշխատանքներ	23 000 000	
		4.2 էլեկտրատեխնիկական աշխատանքներ (ենթակայան)	12 130 600	«Էլեկտրոգեն» ՍՊԸ
		4.4 արտաքին և ներքին ջրամատակարարման, ջրահեռացման հողեհամարման համակարգի ջրամատակարարման աշխատանքներ	8 016 000	«Հատուկանտեխնոնտաժ» ՓԲԸ
		5. Ներմուծում, այդ թվում՝	84 000 000	
		5.1 շինարարական ապրանքներ (ամրան A 500)	25 000 000	
		5.2 հովացման, ջեռուցման, օդափոխության համակարգեր	34 000 000	
5.3 էլեկտրական ապրանքներ	22 000 000			

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	5.4 ջրամատակարարման պոմպեր	3 000 000	
		6. Չեղք բերում, այդ թվում՝	40 000 000	
		6.1 արտադրանքի ներմուծում, ավագ, խիճ, քար և այլն	25 000 000	
		6.2 հողաբացման, ցանկացման սնուցիչներ	8 000 000	
		6.3 էլեկտրատեխնիկական աշխատանքներ	7 000 000	
12	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Արտադրանքի ներմուծում	5 080 000	
		2. Արտադրանքի ներմուծում, այդ թվում բանկային և մաքսային ծախսեր	1 550 000	
		3. Արտադրանքի ներմուծում, այդ թվում բանկային և մաքսային ծախսեր	1 500 000	
		4. Այլ ծախսեր	750 000	
ԸՆԴԱՄԵՆԸ	ԸՆԴԱՄԵՆԸ	8 880 000		
12	Հանագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Կորոթյան և գիտության նախարարություն		
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի կատարման արդյունքները հանձնա-ընդունման միջոցով, սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին		

Գլխ. հաշվապահ



Ղ. Վարդանյան

08.13/2

✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012 թվականի N Մ - 836 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-2/13534-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N ԴԴ/22/10066-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N ՎՄ/3-6/10911-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Վաշինգտոնի հայ-ամերիկյան առողջապահական ասոցիացիայի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի (3 տեղ, 55 կգ ընդհանուր քաշով, 2285.55 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 382.56 ԱՄՆ-ի դոլար, «Ձվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ - 837 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N 3/3.8-2/13551-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N 03/07-1/12082-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N ՎՄ/3-6/10915-12 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N 01/21.1/4322-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով հնդկական «Leading Rdge Communications Pvt. Ltd» կազմակերպությունից ձեռք բերված ու «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված երկու խմբաքանակ բեռ՝


1) համակարգիչներ և տպիչներ՝ 1172 տեղ, 9473 կգ ընդհանուր քաշով, 295660.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը.

2) համակարգիչների հավելյալ պարագաներ՝ 510 տեղ, 9500 կգ ընդհանուր քաշով, 122563 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը.

Համակարգիչներն անհատույց բաշխվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի դպրոցներին (բաշխման ցանկը կցվում է):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ Տնօրենչի մարզի այն դպրոցների ցանկը, որոնք ընդգրկվելու են համակարգչիչների համալրման ծրագրում

Թիվ	Դպրոցի անվանումը	Տնօրեն	Հեռախոս	Աշակերտների թիվը	Կարիքը համակարգիչ	Կարիքը տպիչ
1	Իջևանի թիվ 1 հիմնական	Լուսյա Խաչատրյան	091 75 23 43	503	10	1
2	Իջևանի թիվ 3 հիմնական	Վարդիկ Ստեփանյան	094 94 11 61	466	10	1
3	Իջևանի թիվ 4 հիմնական	Ողջա Խատատյան	094 00 54 50	180	9	1
4	Իջևանի թիվ 5 հիմնական	Ստեփան Վարսպետյան	093 67 00 07	900	10	1
5	Իջևանի վարժարան	Համբիկ Ամիրյան	094 52 00 11	100	8	1
6	Գանձարար մ/դ	Սամվել Մատինյան	091 91 15 77	470	5	1
7	Գեղատնովիտ մ/դ	Հարություն Ղազարյան	077 03 48 51	280	6	1
8	Խաչարձան մ/դ	Աննիա Հարությունյան	093 03 67 78	76	6	1
9	Աղամնավան մ/դ	Սեբեդյ Ռահիդյան	094 00 66 07	56	9	1
10	Ազատամուտ մ/դ	Լարիսա Հակոբյան	093 11 91 44	320	12	1
11	Այաթուր մ/դ	Մուրիկ Ղարաբաչյան	093 55 57 45	550	5	1
12	Այգեռովիտ մ/դ	Վեներա Սիմոնյան	093 67 69 02	380	5	1
13	Անրար	Սամվել Ճաղարյան	094 80 50 10	305	4	1
14	Մարիգուղ	Գառնիկ Փաշինյան	094 70 08 25	193	8	1
15	Եմերգավան	Աշոտ Ղազարյան	091 75 15 93	77	2	1
16	Ազգաշեն	Սարգիս Խաչատրյան	077 65 02 94	96		
17	Հովք	Արսեն Ույիսանյան	093 90 09 92	78		
18	Բերդաբեր	Հենրիկ Աբրահամյան	094 62 00 22	48		
19	Ն. Ծաղկավան	Լուսինա Թեմուրյան	093 50 67 35	8		



Ա. 13/4.3

Թիվ	Դպրոցի անվանումը	Տնօրեն	Հեռախոս	Աշակերտների թիվը	Կարիքը համակարգիչ	Կարիքը տպիչ
20	Կայան	Լենա Վարդանյան	093 38 77 32	136	8	1
21	Լուսաձոր	Արմեն Սարգսյան	094 52 27 07	78	9	1
22	Կիրանց	Վլոդյա Բաբինյան	094 97 94 94	50	2	1
23	թ. Դիլիջան թ. 2 հիմնական	Կամո Խաչատրյան	094 37 13 00	535	12	1
24	թ. Դիլիջան թ. 4 հիմնական	Շոշիկադ Աղոտյան	094 90 75 00	330	10	1
25	թ. Դիլիջան թ. 5 հիմնական	Հովիկ Անանյան	094 90 40 97	262	10	1
26	թ. Դիլիջան թ. 6 հիմնական	Մուսաննա Մարգարյան	093 61 41 09	185	5	1
27	Հաղարծին	Գոհար Թամանյան	094 55 58 59	555	10	1
28	Թեղուտ	Աղան Թամոնյան	093 55 32 86	240	10	1
29	Գոշ մ/դ	Հարկա Ամիրխանյան	093 09 32 11	137	10	1
30	Բերդ թիվ 1	Արտուշ Վիրաբյան	094 83 25 32	260	10	1
31	Բերդ թիվ 2	Եվիթա Աբամյան	093 31 93 82	350	5	1
32	Բերդ թիվ 3 հիմնական	Արթուր Մելիքյան	093 77 73 47 0267 2 37 13 093 61 23 16	380	10	1
33	Բերդ թիվ 4	Անահիտ Աբգարյան	093 67 38 93	140	10	1
34	Բերդ վարժարան	Իրզաննա Թումանյան	093 67 38 93	67	5	1
35	Բերդ արհեստագործական ուսումնարան	Ավայան Աննա	094 95 25 52	137	10	1
36	Արծվաբերդ մ/դ	Արտուշ Մելիքյան	094 10 70 66	360	10	1
37	Արծվաբերդ հիմնական	Միլոշ Ուզունյան	094 94 30 71	126	8	1
38	Իծարար	Վարդան Ղազինյան	094 99 00 34	40	3	1
39	Նավուր	Կամո Մարդանյան	093 33 88 59	190	10	1
40	Չինչին	Արմինե Զուլիսկյան	093 79 55 32	60	5	1




Ա. 13/4.3

Թիվ	Գարոզի անվանումը	Տնօրեն	Հեռախոս	Աշակերտների թիվը	Կարիքը համակարգիչ	Կարիքը տպիչ
41	Վերին Շաղկավան	Ռուբիկ Խայաթոյան	099 09 14 40 0267 6 01 04 տոմ	194	6	1
42	Վարդավան	Հայկ Գրիգորյան	094 57 75 01	100	10	1
43	Պառավարար	Անգին Նրգոյան	077 85 90 09 027 159 009	255	10	1
44	Վերին Կառմիր Աղբյուր	Հրանտ Մխիթարյան	093 53 07 85	263	4	1
45	Ներքին Կառմիր Աղբյուր	Իվան Արամյան	077 77 11 58	136	7	1
46	Թովուզ /ալմժ՝ Տավուշ/	Արարատ Կելեյան	094 90 22 55	204	10	1
47	Այգեպար	Վասիկ Աղամյան	077 64 21 44	62	1	1
48	Մոսեզեղ	Դերենիկ Բաղդյան	093 28 16 19	170	10	1
49	Այգեձոր	Էմիլա Եղիազարյան	093 39 85 98	315	2	1
50	Չոռաբան	Բորիս Ռոզամյան	094 99 09 42	110	6	1
51	Նոռաշեն	Գագիկ Մխիթարյան	093 121 777	196	5	1
52	Չինարի	Ալբերտ Պապյան	093 99 25 94	138	7	1
53	Նունեբերյան թիվ 1	Ռուբիկ Գիշյան	094 92 58 92	355	16	1
54	Նունեբերյան թիվ 2	Փարսադան Անդրեանյան	094 01 31 73	370	11	1
55	Բագրատաշեն թիվ 1	Ռազմիկ Եսայան	0266 6 15 24 077 96 04 19	337	10	1
56	Բագրատաշեն թիվ 2 հիմնակ	Լիանա Ավալերյան	077 22 04 61	104	7	1
57	Կոլբ թիվ 1	Մարինե Կարապոյան	093 73 08 73	388	8	1
58	Կոլբ թիվ 2	Կարեն Նազարյան	0266 5 26 24 091 76 42 42	282	8	1
59	Աճյաձոր հիմնական	Ռուզաննա Մալիխյան	093 03 32 13	57	2	1
60	Այրուճ	Արարատ Բաղդյան	091 28 06 52	285	5	1
61	Բերդավան	Արևիկ Ասատրյան	093 44 95 99	448	10	1
62	Արճիս	Հենրիկ Մուսախյան	094 44 60 99	153	8	1
63	Ոսկեան	Աննա Սարգսյան	091 98 65 25	183	8	1



Ձ. 13/4.3



Թիվ	Գարոզի անվանումը	Տնօրեն	Հեռախոս	Աշակերտների թիվը	Կարիքը համակարգիչ	Կարիքը տպիչ
64	Կոլբ	Մուրել Սիրադյան	093 05 95 95	285	9	1
65	Հարամակ	Գևորգ Թեոդոսյան	093 44 29 34	178	5	1
66	Ջորական	Սիլվա Խոջոյան	094 33 60 63	150	5	1
67	Ոսկեպար	Նվեր Բեգլարյան	093 17 56 84	102	7	1
68	Պարսպան	Էմիլա Կոպիան	094 91 82 76	146	9	1
69	Բաղամիս	Ավարդ Բալթանյան	077 43 32 75	138	10	1
70	Գուլեղ	Մանասար Վարդանյան Արևիկ	077 17 99 00 094 02 22 89	89	4	1
71	Ջուլիս	Վալենտին Վարդանյան	094 90 10 40	83	10	1
72	Մեծբերդական	Մարինե Հարությունյան	077 68 92 67	131	10	1
Ընդամենը:				16183	550	72



Ձ. 13/4.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- 838 -Ա
քաղ. երևան

«ԽԱՐԲԵՐՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 17-ի N 3/3.8-1/13462-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N ՖԲ/ԱՆՄ-5/7156-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի N ԱԱ/3-6/10798-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է .**

1. Բարեգործական որակել Հոլանդիայից «Հասմիկ Արմենի» հասարակական կազմակերպության կողմից «Խարբերղի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված հաշմանդամ երեխաների համար հատուկ սարքավորումների (334 կց քաշով, 1512 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 475 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է օգտագործել մանկատան երեխաների կարիքները հոգալու համար:

2. «Խարբերղի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Նվիրատվության նպատակով

Սարքավորումների ցուցակ /ոչ առևտրային նպատակով/

#	Անվանում	Բրենդ	Քաշ	Երկարություն	Լայնություն	Բարձրություն	Գույն	Գին/ Եվրո	HS կոդ
1	Լիֆտ	Sara	45կգ	0.90 սմ	0.67 սմ	1.40 սմ	սպիտակ	235.00	94029000
2	Լիֆտ	Uno 102	45կգ	1.20 սմ	0.66 սմ	1.34 սմ	սպիտակ	235.00	94029000
3	Լողասարք	Arjo	67կգ	1.90 սմ	1.75 սմ	0.82 սմ	կապույտ	225.00	94029000
4	Լողասարք	Arjo	67կգ	1.90 սմ	1.75 սմ	0.82 սմ	կապույտ	225.00	94029000
5	Կանգնելու սարք	Atlas	25կգ	0.60 սմ	0.87 սմ	1.10 սմ	կարմիր	140.00	87131000
6	Կանգնելու սարք	Atlas	25կգ	0.90 սմ	0.80 սմ	1.30 սմ	կարմիր	140.00	87131000
7	Քայլակ շրջող	Right star	15կգ	1.22 սմ	0.58 սմ	0.35 սմ	կապույտ	90.00	87150010
8	Քայլակ շրջող	Otto Bock	15կգ	1.00 սմ	0.55 սմ	0.45 սմ	կապույտ/ կանաչ	90.00	87150010
9	Քայլակ	mini walk	5կգ	0.72 սմ	0.59 սմ	0.80 սմ	կապույտ	90.50	87150090
10	Քայլ աթոռակ	Kettler	3կգ	0.70 սմ	0.40 սմ	0.14 սմ	սև	10.00	94037000
11	Տիկնիկների տնակ		7կգ	0.63 սմ	0.36 սմ	0.58 սմ	փայտյա	12.50	95030070
12	մանր իրերով տուփ		15կգ					19.00	
13	2 տուփ անձեռոցիկ								96190021
14	2 ծածկոց								63014090
15	2 ոտքի բարձ								94042190
16	3 լիֆտի զամբյուղ								9021010
17	Պատի դեկորացիա								63041910
18	Խաղային բլոկներ								95030035
19	ԸՆԴԱՄԵՆԸ							1512.00	

Handwritten signature or stamp in the bottom right corner.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-839
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12513-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 03/07-1/10931-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ՎՄ/3-6/10140-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ «SEMI SYSTEM W/2 MPSMU & FPD 4200-SCS/F» կիսահաղորդիչների պարամետրերի չափման համակարգը՝ իր բաղադրամասերով (1 տեղ, 37 կգ ընդհանուր քաշով, 52.300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երեվանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-840-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետություն-
նում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 29-ի N 3/3.8-2/12610-12, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի
28-ի N ԴԴ/22/9443-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N ԱԱ/3-6/10440-12 եզրա-
կացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրա-
պետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով
ստացված բեռը (դեղեր՝ Դիդանոզին 400 մգ, N 30–45 տուփ և Ջիդովուդին 300 մգ. N 60–26
տուփ 2 տեղ, 8.8 կգ քաշով, 1066.40 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը
կազմել են 3294.60 հնդկական ռուփի, «Չվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ
պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- 841-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 3/3.8-2/12932-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N ԴԴ/22/9654-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N ԱԱ/3-6/10443-12 եղրակացությունները, **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռը (դեղեր՝ Ալուվիա 200/50 մգ. N 120-396 տուփ 1 տեղ, 104 կգ քաշով, 24076.8 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի **Մ-842-Ա**
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի Մ Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-
թյուն» դրամաշնորհային ծրագիր)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 5-ի N ՍԲ/15-1/9748-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 11-ի N 3/3.8-1/13213-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N ԱԱ/3-4/10833-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-228-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-469-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Ագաթ-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2012 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/5 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձորի մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսերի մեթադոնի բաշխման սենյակի դռների և պատուհանների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 336000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-843-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի N Մ-497-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Հայաստանի Հանրապե-
տության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետա-
կան համալսարան» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12514-12, Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի սեպտեմ-
բերի 26-ի N 03/07-1/10933-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-
6/10144-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ է.**


1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախա-
րարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով Ավստրիայից դրամա-
շնորհային ծրագրի շրջանակներում ձեռք բերված բեռը՝ հավաքածու՝ ուսումնական Qiaxel,
ԴՆԹ-հատվածների մոլեկուլային անալիզատոր սարքի համար (2 տեղ, 7.5 կգ ընդհանուր
քաշով, 4451.70 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխա-
դրման ծախսերը, «Զվարթնոց» Ս/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կա-
ռավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի
օգոստոսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարա-
րության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպու-
թյան կողմից իրականացվող «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական կրթա-
կան ծրագրի մշակում» ծրագրի մասին» N Մ-497-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջա-
նակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

844

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորա-
ցում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N ՍԲ/15-1/9138-12 գրու-
թյունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի
սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/12523 -12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N ՎՄ/3-
4/10188-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջա-
կանորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահա-
կան համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա, հունիսի 29-ի N Մ-468-Ա և օգոստոսի 31-ի
N Մ-705-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սի Այ Թի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01225738) 2012 թվականի հուլիսի 26-ին կնքված՝
N ՇՀԱՊՁԲ- 11/8-12/9-1 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 475850 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- 845Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգա-
յին օգնության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/12574-12 ու
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/10353-12 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.


1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակեր-
պության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվա-
կանի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հա-
կադման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին» N Մ-318-Ա (Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա, 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա և
օգոստոսի 31-ի N Մ-699-Ա որոշումների խմբագրություններով) որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02542882) 2012 թվականի սեպտեմբերի
20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Լուրբիկանտ»
դեղորայքի մատակարարում՝ 3250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-846-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-
թյուն» դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 5-ի N ՍԲ/15-1/9750-12 գրու-
թյունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի
հոկտեմբերի 11-ի N 3/3.8-1/13214-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N ՎՄ/3-
4/10835-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջա-
կանորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի
Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
ծրագրի մասին» N Մ-228-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-469-Ա
որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջա-
պահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144)
և «ԱՅՊՈՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06933045) 2012 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝
N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/4 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով
նախատեսվում է Վանաձորի մարզային հոգեոնկալաբանական դիսպանսերի մեթադոնի
բաշխման սենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 989154 դրամի չափով՝
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-847-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուրերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N ՍՄ/15-1/9546-12 գրություները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 5-ի N 3/3.8-1/12988-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի N ՎՄ/3-4/10628-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուրերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պահպարեխ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05014705) 2012 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԲԸԱՀԱՊՁԲ-12/14 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի ձեռքբերում՝ 933070 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-848-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուրերկույրոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույրոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ՏՄ/15-1/9241-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/12576-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/10309-12 եզրակացությունները, որոշում է.


1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրերկույրոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուրերկույրոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույրոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հանրապետություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02556276) 2012 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԲԸԱՀԾՁԲ-12/17 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է հայտարարությունների հրապարակման ծառայությունների մատուցում՝ 300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-849
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցու-
թյուն» դրամաշնորհային ծրագիր) (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 15-ի N ՍՄ/15-1/10074-12 գրու-
թյունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի
հոկտեմբերի 11-ի N 3/3.8-1/13481-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N ՎՄ/3-
4/11041-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստա-
նի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
ծրագրի մասին» N Մ-228-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի N Մ-469-Ա
որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

«Ակադեմիկոս Ս. Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»
ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00011624) 2012 թվականի օգոստոսի 31-ին կնքված՝ N ՀՀ ԱՆԳ
ՊԸԾՁԲ-12/6 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է
«Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի գնահատման» ծառայությունների մատու-
ցում՝ 9800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ-850-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրա-
պետությունում ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին
աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N 3/3.8-2/13550-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N ԴԴ/22/10038-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N ՎՄ/3-6/11002-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ Է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռները՝ դեղեր (Ատազանավիր 150 մգ, N 60-48 տուփ 1 տեղ, 4,4 կգ քաշով, 1056 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21050 հնդկական ռուփի, «Զվարթնոց» Մ/Տ) և (Աբակավիր 300 մգ, N 60-22 տուփ, Լամիվուդին 150 մգ. N 60-4 և Էֆավիրենզ 200 մգ. N 30-246 տուփ 4 տեղ, 16.05 կգ քաշով, 653.38 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21050 հնդկական ռուփի, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱԿ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- 851 -Ա
քաղ. երևան

«ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՌԵՏՍՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 16-ի N 3/3.8-2/13431-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 17-ի N ԴԴ/22/10211-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի N ՎՄ/3-6/10800-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ Ֆրիդա Ջորդանի կողմից «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով որպես օժանդակություն ուղարկված բեռի (ցողունային բջիջների տեղափոխման կոնտեյներ, 1 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 2307 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 270.5 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- 854
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ԵՎ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵ-
ՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկույրոցի
կառավարման ընդլայնում», «Առողջապահական համակարգի
հզորացում» դրամաշնորհային ծրագրեր)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N SU/15-1/9545-12 գրույթունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 5-ի N 3/3.8-1/12987-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի N ՎՄ/3-4/10629-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույրոցի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջապես կասեցված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկույրոցի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-821-Ա, դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա և 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N Մ-829-Ա որոշումների խմբագրություններով) և 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-

կարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-220-Ա, հունիսի 29-ի N Մ-468-Ա և օգոստոսի 31-ի N Մ-705-Ա որոշումների խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Սմարթլայն» ՄՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548908) 2012 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԲԸԱՀԱՊԶԲ-12/13 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է գրենական պիտույքների ձեռքբերում՝ 650000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆՈՒՆԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- **853** - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՈՒՈՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

